

servent et se les enseignent l'un à l'autre en mémoire du bienheureux. —

Saint Athénogène fut martyrisé sur le

* L'Arménie, au quatrième siècle, par le moyen de St. Grégoire l'illuminateur, notre premier patriarche, reçoit, entre autres, un grand trésor sacré, ou plutôt deux trésors fort importants: le corps et l'histoire du martyr St. Athénogène, évêque de Bidakdo. Cette histoire pieusement conservée jusqu'aujourd'hui, est traduite par nous en français pour être publiée dans notre Revue de 1881. L'original en est déjà publié dans le Martyrologe Arménien, imprimé dernièrement à St. Lazare, 2 vol. Venise 1874.

Notre but est de faire connaître cet écrit aux Européens, de répondre au désir des savants et des martyrologistes, qui manquent de document à ce sujet. Nous espérons que cette publication dissipera leurs doutes. Nous possédons deux narrations de la vie de St. Athénogène, dont la première est composée par un témoin oculaire, nommé Héliaros ou Hilarus, la seconde n'ayant aucune importance nous avons laissée à part.

Cette vie au temps de St. Basile circulait parmi les Grecs, mais plutôt elle disparut. Les églises qui célèbrent la fête du Saint, ne possèdent pas l'histoire de sa vie, excepté l'église Arménienne. Dans les calendriers des Syriens, des Egyptiens et des Moscovites on trouve le nom d'Athénogène, rien de plus.

Voici l'idée qu'ont les Latins de St. Athénogène selon ce qui est écrit dans les Actes des Saints des Bollandistes. Quo tempore locove martyrium S. Athenogenes subierit, non traditur. Ejus meminit S. Basilus, lib. de Spiritu Sancto ad Amphilochem, cap. 29. « Quod siquis, inquit, novit Athénogenis hynnum, quem tanquam aliud aliquod valedictionis

bûcher comme un holocauste d'agréable odeur à N. S. J. C. à qui gloire dans les siècles des siècles. Amen. (*)

Traduit par le P. CYRILLE ELOYAN

munus discipulis suis reliquit, festinans jam ad consummationem quae fit per ignem, is novit et Martyrum sententiam de Spiritu Sancto. (Tom. II, pag. 189).

On peut voir sur le même sujet, *Annales Ecclesiastici* de Baronius (Tom. II, an. 196, num. 7 pag. 359)

Dans la vie des Saints de Giry, corrigée, complétée et continuée jusqu'à notre temps par Mr. Paul Guerin en 1862, Tom. Ier. pag. 599, « St. Athénogène a été loué excellemment par Saint Basile dans son Traité du Saint-Esprit. Ce grand docteur cite son témoignage en faveur de la divinité du Saint-Esprit. Il y eut aussi un évêque qui portait le même nom; il en sera question plus loin. Baronius soupçonne que St. Athénogène pourrait bien être l'auteur de la belle apologie du christianisme, adressée aux empereurs Marc-Aurèle et Commode, et communément attribuée à un Athénagore, dont on ne sait absolument rien. Selon cette opinion, le nom d'Athénagore ne serait qu'une altération d'Athénogène. »

Mais je crois que l'on ne peut avoir aucun doute relativement à ce Saint, qu'il ne faut pas confondre avec Athénagore philosophe et apologiste. Quand il dit (Baronius) qu'Athénagore a écrit une apologie du christianisme au temps de Marc-Aurèle et de Commode, on voit que ce doit être de 180 à 192, selon l'histoire, tandis qu'Athénogène vivait au temps de Dioclétien et de Maximien comme on le voit par son martyre, c'est-à-dire de 284 à 305. —

ՅՍ.ՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՏՆՈՐԷՆ ԺՈՂՈՎՈՅ ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ՝

Հայոց Միացեալ Ընկերութեանց նորընտիր Տնօրէն ժողովն, իւր պաշտօնն ստանձնել լիովի գիտակցութեամբ այն միմ պատասխանատուութեան և ծանր պարտոյ՝ որք իւր պաշտաման կարեւորութենէն կը ծագին:

Նա, ամեն բանէ առաջ, իրեն յանձնուած գործին վրայ խորին յարգանք կը նայի և չկարծիր թէ գտնուին իւր խնամոց յանձնուած շահերէն աւելի նուիրական շահեր: Կը նկատէ Հայոց Միացեալ Ընկերութիւնքն իրենց նպատակին և արդեանց մէջ իրեն ամենէն կարեւոր այն հաստատութեանց՝ որք ցայսօր երևան եկան Ս. Գ. Գին մէջ. զի չէ կարելի ուրանալ Հայ ժողովրդեան համար կրթութեան անհրաժեշտ պէտքն ու բարձրագոյն օգտակարութիւնքն, և զի այսօր Հայաստանի և Կիլիկիոյ մէջ 28 վարժարանք, նոցա խնամոց

ներքեւ, սրտի և մտաց սնունդ կը մատակարարեն Հազարաւոր Հայ մանկանց: Գիտէ այն բարձր գիրքն՝ յորում կը գտնուին այսօր Միացեալ Ընկերութիւնք Ս. Գ. Գին, գիրք՝ զոր տօին նոցա ամենուտ յայտնուած մի ընդհանուր Համակրութիւն և այն Հայրապետական Հովանին՝ զոր տարածեցին նոցա վրայ Նորին Վեհափառութիւն Տ. Տ. Գեորգ Ս. Կաթողիկոսն և Նորին Բարձրաշնորհ Սրբազնութիւն Տ. Տ. Ներսէս Ս. Պատրիարքն:

Նորընտիր Տնօրէն ժողովոյ պարտքն պիտի լինի ուրիշն ջանալ ոչ միայն պահպանել Ընկերութեան ձեռնարկներն, այլ և իրաց աւելի բարեկարգ ուղղութիւն մի տալ և երևոական ու կրթական տեսակէտով զարգացունել այս բարեգործ Հաստատութիւն:

Առ այս, իրեն առաջին աստիճանի կարեւորութիւն ունեցող կէտ, պիտի աշխատի Ընկերութիւն կեդրոնական ժողովոյն և իւր մէջ ներդաշնակութիւնն անվթար պահել: Իւր կազմութիւնն արդէն ծնունդ եւ

1 Ժողովոյ Ասեանապետ Մ. Զեբազ գրելով մեզ այս Ֆայտարարութիւնը կը խնդրէ որ հրատարակենք ի Բազմավայն:

ղած է միաբանասէր ողոյ, և իւր գործողութեանց մէջ ևս առաջնորդութեամբ մի և նոյն ոգիին, կը յուսայ որ ոչ ևս տեղի պիտի մնայ հակառակութեանց:

Տնօրէն ժողովն կը փափաքէ զօրութեանց համախմբութիւն տեսնել ոչ միայն Երեսփոխանական մարմինոյն, ոչ միայն Բնկերութեան Անդամոց, այլ և բոլոր Ազգին մէջ: Որքան ընդարձակ է այն դաշտն, զոր Բնկերութիւնն կոչուած է մշակել, այնքան ևս ընդարձակ պարտի լինիլ այն աշակցութեան շրջանակն՝ յորմէ Բնկերութիւնն պէտք ունի շրջապատուելու: Հարկ է որ անձնիւր Երեսփոխանի, անձնիւր Անդամի և անձնիւր ազգային անհատի պարտքն ինի իւրովսնն նպաստել Բնկերութեան հէմնաւորութեան և յառաջացման: Հարկ է խորհել մի անխախտ հիման վրայ դնել Բնկերութեան գործն, հաստատուն դրամագումարներ ստեղծել նորա հիմնարկութեանց իւրաքանչիւրին համար և աճեցընել անշուշտ սոցա թիւն, — զի ընդարձակ են պէտք Հայրենեաց լուսաւորութեան, և կարեւոր բարենորոգումներ գործադրել նոցա մէջ:

Միացեալ Բնկերութիւնք դեռ իրենց ուրորանին մէջ են գրեթէ: զեռ չեն կարող հաստատուն քայլեր առնուլ և առանձին գնալ, և զեռ չեն անցուցած այն հոսանքն ուր իրենց գոյութիւնն աւելի զիւրաւ կըրնայ վտանգիլ: Ուստի և հիմայ մանաւանդ պէտք ունին հզօր աշակցութեան և մեծամեծ նպաստից, հիմայ մանաւանդ կարեւոր է մի մեծ ուսումնասիրական շարժումն յօգուտ այս քաղաքակրթիչ ձեռնարկին:

Սակայն, զգաղաքաբար, Տնօրէն ժողովն կը տեսնէ որ հասութից աղբիւրք երթալով նուազած են, նպաստք յոյժ ցանցաւ, նուէրատոմսից սպառումն տկար կը քալէ և նոյն իսկ ամապլնարներու գանձումն կը զժուարանայ, և պահանջք կը դիզուին. այսպէս խոտոր համեմատութեան մի մէջ դրուելով հասոյթք ծախուց հետ, որք կ'աճին բազմապատիկ պիտոյից առջև:

Ուստի Տնօրէն ժողովն, ամեն Անդամի և ամեն Հայու խորին ուշադրութեան յանձնելով իրաց այս վիճակն, հրաւեր կը կարգայ հասարակաց նպաստից և ձեռնառութեան, հարստին ոսկւոյն և ուղբատին լուսմային, որք անտարակոյս չեն կարող մի ա-

ւելի սուրբ և արդիւնաւէտ նպատակի գործածուիլ:

Հրաւեր կը կարգայ բոլոր Անդամոց, որպէս զի բաժիններու վճարումն չյետաձգեն, և եթէ կարելի է, յաւելուն և յորդորեն զայս բաժանորդիլ Բնկերութեան:

Հրաւեր կը կարգայ ի սիրեաւ աշխարհի ցրուեալ ամեն Հայոց, Մասնաճիւղեր կազմելով փոթով գործակցիլ Հայրենեաց լուսաւորութեան և արդեամբ տալ փորձն այն մեծ սկզբան՝ թէ ամեն երկիրներու Հայք համկուրչիս են միմեանց: Եւ հրաւեր կը կարգայ մասնաւորապէս Հայ երիտասարդութեան, զի այս ուսումնաստարած Բնկերութիւնն երիտասարդութեան յղացումն և գործն է:

Լուսաւորութեան այս մարգասիրական գործն արժանի է որ շարժէ ամեն սրտեր, շաշի ամեն համակրութիւններ, բանայ ամեն քսակներ և յարուցանէ մեծ բարերարներ, յինքն ձգելով ազգասէր և բարեպաշտ ոգիներու հարուստ նուէրներն ու կտակներն:

Տնօրէն ժողովն լրագրաց միջոցաւ առժամայն պիտի ծանուցանէ երախտագիտութեամբ ամեն Դուրբատուի և ամեն նոր Մասնաճիւղի անդամոց անուններն և պարբերաբար տեղեկութիւններ պիտի հաղորդէ Բնկերութեան երևուական և կրթական վիճակին վրայ: Եւ, ժողովուրդէն դրամ խնդրած միջոցին, կը հրաւիրէ զայն իրեն հաղորդել իւր խորհուրդներն և դիտողութիւնքն ալ, որք եթէ օգտակար և արդար գատուին, իւր կողմէն գործադրութեան պիտի դրուին անմիջապէս:

Տնօրէն ժողովն վստահ է որ իւր այս տրամադրութիւնք պիտի գնահատուին Ազգին կողմէ, և թէ, իւր հրաւերն անյնչի չբնալով, ամեն կողմէ օգնականութեան ձեռքեր պիտի կարկառան և գան զօրացընել իւր ջանքերն, զորս չպիտի խնայէ բնաւ Բնկերութեան գործին կանոնաւոր և արդիւնաւոր ուղղութեան և տակաւ զարգացման համար:

Կառաւանդաւորոյիս 29 յունիս 1881:

Ի ԿԻՍԵՆ ՀԱՅՏԵՍ ՄԻՍԵՍԵՆ ՀԱՅԵՐԵՐԹԵԱՆՑ
ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎՑ

ԱՌՆԱՊԱՐԱՅԻՐ
ԱՐԵԱՅՈՒՆ ԾՈՎԱԶԱՆԵՐՈ
ԱՌՆԱՊԱՅԻՐ
Մ. ԶԵՐԱՅ